ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ – 2018
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՓՈՒԼ
ՀԱՐՑԱՏՈՍՍ
11 - րդ դասարան

I. ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ (17 միավոր)

1) «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (12 միավոր)

ա. *Նշել ճիշտ պատասխանը. 1 – 8–րդ առաջադրանքներ:* (0,5 X 8 = 4 միավոր)

1. Ո՞ր արքայի թողած արձանագրության մեջ է առաջին անգամ հիշատակվում Գառնին:
1) Սարդուրի II 3) Արգիշտի II
2) Արգիշտի I 4) Ռուսա II

2. Ե՞րբ է Լևոն Մեծագործը գրավել Անտիոքը և իշխանությունը հանձնել Ռայմոնդ-Ռուբենին:
1) 1219 թ. 3) 1198 թ.
2) 1202 թ. 4) 1216 թ.

3. Քանի՞ զինվորից էր բաղկացած ուրարտական գնդի մեկ վաշտը:
1) 70 3) 50
2) 90 4) 100

4. Ո՞րն էր Սանատրուկ արքայի աթոռանիստը:
1) Մաժաք 3) Մծբին
2) Եդեսիա 4) Մծուրք

5. Ե՞րբ է Մխիթար սպարապետը թուրքերին պարտության մատնել Օրդուբադում.
1) 1727 թ. 2) 1728 թ. 3) 1729 թ. 4) 1730 թ.

6. Ե՞րբ է Համազասպի ջոկատը գրավել Խիզանը.
1) 1916 թ. հունվարի 13 – ին 3) 1916 թ. մարտի 11 - ին
2) 1916 թ. փետրվարի 2 – ին 4) 1916 թ. մայիսի 15 – ին

7. Որքա՞ն զինվոր է կորցրել թուրքական բանակը 1724 թ. Երևանի գրավման ժամանակ.
1) 5 հազար 2) 10 հազար 3) 15 հազար 4) 20 հազար

8. Կարդալ մեջբերված հատվածը և պատասխանել հարցին.

«Անհնազանդ մի ազգ են… մեր միջև…: Բայց է՛կ… ես իմս (այսինքն՝ Արևմտյան Հայաստանի հայ զորականներին) ժողովեմ և Թրակիա ուղարկեմ, և դու քոնը (այսինքն՝ Արևելյան Հայաստանի հայ զորականներին) ժողովի՛ր և հրամայի՛ր Արևելք տանել: Քանզի, եթե մեռնեն, մեր թշնամիները կմեռնեն, և եթե սպանեն, մեր թշնամիները կսպանվեն, և մենք կապրենք խաղաղությամբ: Քանզի, եթե նրանք իրենց երկրում մնան, մեզ հանգիստ չի լինի»:

Բյուզանդական ո՞ր կայսեր նամակից է մեջբերված հատվածը:

1) Կոստանդին II
2) Թեոդոսիոս I
3) Հուստինիանոս I
4) Մորիկ

բ. Լրացնել պատասխանը. **(1 X 4 = 4 միավոր)**

1. Վանի թագավորության արքաների անունները դասավորել ըստ նրանց գահակալման հաջորդականության:

ա. Արգիշտի I
բ. Սարդուրի II
գ. Ռուսա II
դ. Մենուա
ե. Ռուսա I
զ. Սարդուրի I

1	2	3	4	5	6

2. Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:

ա. Շապուհ II-ի զորքերի ջախջախումը Գանձակի մոտ և Հայաստանում խաղաղության վերականգնումը

բ. Պապի վերադարձը Հայաստան Տերենտիոսի գլխավորած զորաջոկատով

գ. Պապ թագավորի վերադառնալը Տարսոնից Հայաստան

դ. Ատրպատականում Շապուհ II-ի գանձարանին և կանանոցին տիրանալը հայերի կողմից

ե. Մերուժան Արծրունու ձերբակալությունը և մահապատիժը

զ. Ձիրավի ճակատամարտը

1	2	3	4	5	6

3. Կատարել համապատասխանեցում.

Հիմնադրման վայր	Կազմակերպություն
1. Ալեքսանդրապոլ	ա) «Հայրենիքի սիրո գրասենյակ»
2. Մեծ Ղարաքիլիսա	բ) «Պաշտպան հայրենյաց»
3. Վան	գ) «Բարենպատակ ընկերություն»
4. Կարին	դ) «Հայրենասերների միություն»
5. Մոսկվա	ե) «Հայասեր–ազգասեր»
	զ) «Միություն ի փրկություն»

1	2	3	4	5

4. Պաշտոնը համապատասխանեցնել գործչի անվանը.

1) Զորի Զորյան
2) Արամ Մանուկյան
3) Հակոբ Զավրյան
4) Վահան Փափազյան
5) Ն. Չխեիձե
6) Ստեփան Շահումյան

1	2	3	4	5	6

ա) Արևմտահայերի ազգային խորհրդի նախագահ
բ) Բաքվի կոմունայի ղեկավար
գ) Ախալցխայի Հայոց ազգային խորհրդի նախագահ
դ) Արևմտյան Հայաստանի գլխավոր կոմիսարի քաղաքացիական գծով տեղակալ
ե) Անդրկովկասյան Սեյմի նախագահ
զ) Երևանի նահանգի դիկտատոր
է) Հայոց ազգային խորհրդի նախագահ

գ. *Լրացնել պատասխանը:* **(1 X 4 = 4 միավոր)**

1. Ո՞ր երկու իրադարձություններն են խախտում տրված շարքի ժամանակագրական հաջորդականությունը. **(0,5 X 2 = 1 միավոր)**

1) Հայոց կաթողիկոսական աթոռի փոխադրումը Հռոմկլա
2) Մլեհի կողմից Մսիս, Տարսոն և Ադանա քաղաքների ազատագրումը բյուզանդացիներից
3) Միրիոկեֆալոնի ճակատամարտը

4) Թորոս II–ի կողմից բյուզանդական զորքերի ջախջախումը Մսիս քաղաքի մոտ
5) Խաչակրաց երրորդ արշավանքի սկիզբը
6) Լևոն II–ի և Բոհեմունդի միջև հաշտության պայմանագրի կնքումը Սսում
7) Երուսաղեմի գրավումը Սալահ ադ Դինի կողմից
8) Լևոն II–ի հանդիսավոր թագադրությունը
9) Լևոն Մեծագործի կողմից Լամբրոն ամրոցի գրավումը

2. Ստորև բերված պնդումներից որո՞նք են սխալ. (0,5 X 2 = 1 միավոր)

ա) Բագրատունիները նպատակահարմար գտան Կամսարականներից իրենց անցած Շիրակի նշանավոր Անի ամրոցը դարձնել մայրաքաղաք:
բ) Աշոտ III–ը և նրա հաջորդները միջոցներ չէին խնայում նոր մայրաքաղաքը բարեկարգելու, շքեղ պալատներով, եկեղեցիներով, բնակելի և այլ շինություններով կառուցապատելու համար:
գ) Անին մայրաքաղաք դարձնելու տոնակատարությունը միացվեց Աշոտ III–ի թագադրության հանդիսության հետ:
դ) Մեսրոպ Արտազեցի կաթողիկոսը բոլորի ներկայությամբ մեծ շուքով օծեց Աշոտ III թագավորին և նրան հռչակեց շահնշահ՝ արքայից արքա:
ե) Աշոտ III–ի թագադրության հանդիսություններին Անի էին հրավիրվել «ամենայն իշխանքն տանն Հայոց», զորքը, Աղվանքի թագավորը՝ իր շքախմբով, բարձրաստիճան հոգևորա կաններ և այլ նշանավոր դեմքեր:
զ) Աշոտ III–ի թագավորությունը օրինական ճանաչվեց Բյուզանդական կայսրության, մոնղոլ զորավար Չարմաղանի, հարևան Վիրքի ու Աղվանքի թագավորությունների կողմից:

3. Գտնել ճիշտ պնդումները. (0,5 X 2 = 1 միավոր)

1) XVIII դ. առաջին կեսից միայն զեյթունցիները պարտավորվեցին օսմանյան իշխանություններին վճարել տարեկան որոշակի հարկ և պահպանեցին իրենց ներքին ինքնուրույնությունը:
2) Մելիքները պարտավոր էին իրենց տիրապետության սահմաններում ճնշել խռովարարներին, պատերազմների ժամանակ իրենց զորքերով ներկայանալ շահին և պաշտպանել երկրի սահմաններն օտար հարձակումներից:
3) Միքայել Սեբաստացի կաթողիկոսի կողմից 1562 թ. Վենետիկ ուղարկված մահտեսի Շահմուրատի գլխավորած պատվիրակության նպատակն էր եվրոպական տերություններին համոզել, որպեսզի օգնեն հայերին ազատագրվելու թուրք–պարսկական տիրապետությունից:

4) Կարա Յուսուֆի կառավարման վերջին շրջանում Արցախում, Սյունիքում, Գուգարքում, Վայոց ձորում, Գեղարքունիքում և այլ վայրերում հայ իշխանական տների ներկայացուցիչները վերականգնեցին իրենց իշխանությունն ու վարչական կառավարումը:
5) 1605 թ. Արարատյան դաշտ ներխուժած և Վասպուրականում ձմեռած օսմանյան բանակը 1606 թ. տեղի ունեցած վճռական ճակատամարտում պարտություն կրեց և համաձայնեց հաշտության պայմանագիր կնքելու պարսիկների հետ:
6) Օսմանյան թուրքերը 1453 թ.՝ Կ.Պոլիսը գրավելուց երկու տարի հետո, թույլատրեցին հիմնադրել հայոց պատրիարքություն, որը պետք է տնօրիներ Մերձավոր Արևելքի և Օսմանյան պետության հայ համայնքների հոգևոր կյանքը:

4. VIII դարի հակաարաբական ապստամբություններին վերաբերող ստորև բերված պնդումներից որո՞նք են սխալ. (0,5 X 2 = 1 միավոր)

ա. Սասուն գավառը, որ արաբների կողմից սկզբում մտցվել էր «Ջազիրա» (Հյուսիսային Միջագետք) նահանգի կազմի մեջ, միացվեց Արմինիային՝ անցնելով հայոց իշխանի իրավասության ներքո:
բ. Գնալով Դվին՝ Արտավազդ Մամիկոնյանը խորամանկությամբ արաբ ոստիկանից զենք էր ստացել խալիֆայության թշնամիների դեմ կռվելու պատրվակով:
գ. Ջախջախելով Տարոն ներխուժած արաբական ջոկատը՝ Մուշեղ Մամիկոնյանն ամրացավ Արտագերս ամրոցում:
դ. Տայքում զինելով իր ռազմիկներին՝ Արտավազդ Մամիկոնյանը հարձակվեց արաբ գլխավոր հարկահանի վրա, խլեց հավաքված ամբողջ հարկը, ապա իր ընտանիքով ու զինակիցներով հեռացավ Մեծ Հայքի հյուսիսարևմտյան սահմանային գոտի, այդտեղից էլ՝ Կիլիկիա:
ե. Կարինը զավթած արաբական կայազորից 6000 հեծյալ եկավ Բագավան գյուղ, այստեղ Մուշեղ Մամիկոնյանի ջոկատը ջախջախեց թշնամուն և փախուստի մատնեց արաբական զորքի մնացորդներին:
զ. Հայրենիքի ազատության համար Արձնիի ճակատամարտում զոհվեցին Բագրատունյաց, Մամիկոնյան, Գնունյաց և այլ տոհմերի նախարարներ, ինչպես նաև ռամիկներ՝ մոտ 3000 հոգի:

2) «ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» (5 միավոր)

ա. *Նշել ճիշտ պատասխանը. 1 – 4 – րդ առաջադրանքներ:* (0,5 X 4 = 2 միավոր)

1. Ո՞վ է Արևմտյան (Հռոմեական) կայսրության վերջին կայսրը.

1) Հոնորիոսը
2) Արկադիոսը
3) Օդոակրը
4) Հռոմուլոս Ավգուստուլոսը

2. Ե՞րբ է հիմնվել Իկոնիայի սուլթանությունը.

1) 1055 թ.
2) 1071 թ.
3) 1075 թ.
4) 1080 թ.

3. Ե՞րբ է կնքվել «Մյունխենյան գործարքը».

1) 1938 թ. հունիսին
2) 1939 թ. սեպտեմբերին
3) 1939 թ. օգոստոսին
4) 1938 թ. սեպտեմբերին

4. Ո՞րն էր մոնղոլական նվաճումների ժամանակ Ռուսիայի պարտության հիմնական պատճառը.

1) Գյուղացիական ապստամբությունների հետևանքով Ռուսիայի թուլացումը:
2) Կրիվիչների, վյատիչների և դրևլյանների ապստամբության հետևանքով Ռուսիայի թուլացումը:
3) Շվեդների և բյուզանդացիների դեմ պատերազմների հետևանքով Ռուսիայի թուլացումը:
4) Մասնատված և անկախ իշխանությունների միջև երկպառակտչական պատերազմների հետևանքով Ռուսիայի թուլացումը:

բ. *Լրացնել պատասխանը* (1 X 2 = 2 միավոր)

1. Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ. (1 միավոր)

ա. Հռոմի գրավումն ու ավերումը վեստգոթերի կողմից

բ. Հուլիոս-Կլավդիոսների հարստության հիմնումը

գ. Ֆլավիոսների հարստության հիմնումը

դ. Հռոմեական-գերմանական-գալլական բանակի հաղթանակը հոների դեմ Կատալաունյան դաշտում

ե. Անտոնիոսների հարստության հիմնումը

զ. Թեոդոսիոս կայսեր կողմից Հռոմեական կայսրության բաժանումը երկու մասի

1	2	3	4	5	6

2. Ճակատամարտերը համապատասխանեցնել տարեթվերին. (1 միավոր)

1. Մագնեսիայի ճակատամարտը
2. Ակցիումի ճակատամարտը
3. Գավգամելայի ճակատամարտը
4. Կինոսկեֆալեի ճակատամարտը
5. Քերոնիայի ճակատամարտը

1	2	3	4	5

ա. Ք.ա. 331 թ.

բ. Ք.ա.197 թ.

գ. Ք.ա. 338 թ.

դ. Ք.ա. 190 թ.

ե. Ք.ա. 146 թ.

զ. Ք.ա. 31 թ.

գ. *Լրացնել պատասխանը.* (0,5 X 2 = 1 միավոր)

1. Բերված պնդումներից ընտրել երկուսը, որոնք չեն վերաբերում Վերսալ-վաշինգտոնյան համակարգի ձևավորմանը:

ա) Վերսալ-վաշինգտոնյան համակարգի ձեռքբերումներից էր ազգերի ինքնորոշման և սեփական պետություն ունենալու իրավունքի ճանաչումը :

բ) Ճշգրտվեցին նորանկախ պետությունների կարգավիճակն ու սահմանները:

գ) Ստեղծվեց մշտապես գործող միջազգային մարմին՝ Միավորված ազգերի կազմակերպությունը:

դ) Հաղթանակած պետությունները պատերազմի կորուստների բեռը բարդեցին պարտվածների վրա:

ե) Եվրոպայի և Միջին Արևելքի նորաստեղծ պետությունների սահմանները գծվեցին՝ առանց հաշվի առնելու դրանց ազգային կազմը, և միլիոնավոր մարդիկ սկսեցին գաղթել երկրից երկիր:

զ) Հաղթողները տիրացան պարտվածների (մասնավորապես՝ Գերմանիայի, Բելգիայի, Իտալիայի) գաղութներին և սահմանեցին տիրապետության ավելի խիստ կարգ:

II. ՊԱՏԱՍԽԱՆԻ ԱԶԱՏ ՇԱՐԱԴՐԱՆՔՈՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ (3 միավոր)

Հայաստանի Առաջին Հանրապետությունը

ա) Ներկայացնել և գնահատել ՀՀ-ի հռչակումը՝ Հայոց պետականության վերականգնումը: **(0,5 միավոր)**

բ) Ներկայացնել և լուսաբանել ՀՀ իշխանության մարմինների ստեղծման և բանակաշինության գործընթացը: **(1 միավոր)**

գ) Ներկայացնել և մեկնաբանել ՀՀ մշակութային կյանքը. արժևորել ՀՀ մշակութային կյանքում արձանագրված ձեռքբերումները: **(1,5 միավոր)**

Է. Մինասյան
Պատմության հանձնաժողովի նախագահ,
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

11. 04. 2018 թ.